ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-983-09.12.2024-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 126-րդ հոդվածի 5.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.1. Շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝

1) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) բաժնետոմսերի մասով 2020 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված շահաբաժինների մասով.

2) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) բաժնետոմսերի՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օտարումից, մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ այլ արժեթղթերով փոխանակումից կամ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կատարվող նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով.

3) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված)

պարտատոմսերից մինչև այդ պարտատոմսերի մարումը ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացված եկամուտների մասով.

4) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացված եկամուտների մասով.

5) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերի՝ մինչև այդ պարտատոմսերի մարումը օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով.

6) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերի՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օտարումից, մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ այլ արժեթղթերով փոխանակումից կամ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կատարվող նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով.

7) 2020 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ռեզիդենտ իրավաբանական անձին տրամադրած փոխառության գծով 2020 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ հաշվետու ժամանակահատվածներին վերաբերող եկամուտների մասով, պայմանով, որ տվյալ փոխառությունն ամբողջությամբ ֆինանսավորվել է համարժեք պայմաններով թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման շնորհիվ ու հանդիսանում է այդ պարտատոմսերի ապահովման միջոց, իսկ այդ պարտատոմսերը Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորվող շուկայում թույլատրված են առևտրին:»:

Հոդված 2. Օրենսգրքի 149-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) բաժնետոմսերի մասով 2020 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված շահաբաժինները.».

2) 1-ին մասը 4-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ և 6-րդ կետերով.

«5) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև այդ պարտատոմսերի մարումը ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց.

6) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:».

3) 2-րդ մասի 4-րդ կետում «ֆոնդային բորսայում ցուցակված» բառերը փոխարինել «ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակված (առևտրին թույլատրված)» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 363-րդ հոդվածի 5-րդ մասում «դ-ժե» բառերը փոխարինել «դ-իա» բառերով:

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել 2020 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-82-Ն օրենքի 6-րդ հոդվածը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերություն-ների նկատմամբ:

~~*Առաջին ընթերցում*~~
Երկրորդ ընթերցում

Պ-983-09.12.2024-ՏՀ-011/1

Տեղեկանք

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 126-րդ հոդվածի 5.1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«5.1. Շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝

1) ~~2020 թվականի մարտի 1-ից մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ~~ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչեւ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առեւտրին թույլատրված) բաժնետոմսերի մասով 2020 թվականի մարտի 1-ից մինչեւ ~~2026~~ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված շահաբաժինների մասով.

2) ~~2020 թվականի մարտի 1-ից մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ~~ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչեւ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առեւտրին թույլատրված) բաժնետոմսերի՝ մինչեւ ~~2026~~ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օտարումից, մինչեւ ~~2026~~ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ այլ արժեթղթերով փոխանակումից կամ մինչեւ ~~2026~~ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կատարվող նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով.

3) ~~2020 թվականի մարտի 1-ից մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ~~ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված

(առեւտրին թույլատրված) պարտատոմսերից ~~մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ~~ մինչև այդ պարտատոմսերի մարումը ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձեւով ստացված եկամուտների մասով.

4) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսների կամ մարելիս զեղչի ձևով ստացված եկամուտների մասով.

5) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերի՝ մինչև այդ պարտատոմսերի մարումը, օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով.

~~4~~6) ~~2020 թվականի մարտի 1-ից մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ~~ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առեւտրին թույլատրված) պարտատոմսերի՝ մինչեւ ~~2026~~ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օտարումից, մինչեւ ~~2026~~ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ այլ արժեթղթերով փոխանակումից կամ մինչեւ ~~2026~~ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կատարվող նման այլ գործարքներից ստացված եկամուտների մասով.

~~5~~7) 2020 թվականի մարտի 1-ից մինչեւ ~~2024~~ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ռեզիդենտ իրավաբանական անձին տրամադրած փոխառության գծով 2020 թվականի մարտի 1-ից մինչեւ ~~2026~~ 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ հաշվետու ժամանակահատվածներին վերաբերող եկամուտների մասով, պայմանով, որ տվյալ փոխառությունն ամբողջությամբ ֆինանսավորվել է համարժեք պայմաններով թողարկված պարտատոմսերի տեղաբաշխման շնորհիվ ու հանդիսանում է այդ պարտատոմսերի ապահովման միջոց, իսկ այդ պարտատոմսերը Հայաստանի Հանրապետությունում գործող կարգավորվող շուկայում թույլատրված են առեւտրին:»:

Հոդված 2. Օրենսգրքի 149-րդ հոդվածի՝

1~~.~~) 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.:

~~«4) 2020 թվականի մարտի 1-ից մինչեւ 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակված (առեւտրին թույլատրված)՝~~

~~ա. բաժնետոմսերի մասով 2020 թվականի մարտի 1-ից մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված շահաբաժինները,~~

~~բ. պարտատոմսերից մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձեւով ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչեւ մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց,~~

~~գ. պարտատոմսերի՝ մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ օտարումից, մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ այլ արժեթղթերով փոխանակումից կամ մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կատարվող նման այլ գործարքներից ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչեւ մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց.~~

4) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) բաժնետոմսերի մասով 2020 թվականի մարտի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված շահաբաժինները.

5) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև այդ պարտատոմսերի մարումը ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց.

6) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված (առևտրին թույլատրված) պարտատոմսերից մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ստացված տոկոսները կամ մարելիս զեղչի ձևով ստացվող եկամուտները, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

~~2. 2-րդ մասի 4-րդ կետից հանել «, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների» բառերը:~~

3) 2-րդ մասի 4-րդ կետում «ֆոնդային բորսայում ցուցակված» բառերը փոխարինել «ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակված (առևտրին թույլատրված)» բառերով:

Հոդված 3. Օրենսգրքի 363-րդ հոդվածի 5-րդ մասում «դ-ժե» բառերը փոխարինել «դ-իա» բառերով:

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել 2020 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-82-Ն օրենքի 6-րդ հոդվածը:

~~***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:~~

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-983-09.12.2024-ՏՀ-011/1) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ՀՕ-82-Ն ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-983[1]-09.12.2024-ՏՀ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագիր և «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հունվարի 24-ի ՀՕ-82-Ն հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-	Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասը, ըստ որի սահմանված կարգով պաշտոնապես հրապարակված և ուժի մեջ մտած փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող նորմատիվ իրավական ակտում փոփոխությունների կամ լրացումների մասով փոփոխություն կամ լրացում չի կատարվում, իսկ նոր փոփոխությունները կամ լրացումները կատարվում են միայն հիմնական ակտում, առաջարկում ենք առաջին ընթերցմամբ ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հունվարի 24-ի ՀՕ-82-	**Ընդունվել է:** «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագիրը վերանայվել է: Միևնույն ժամանակ, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հունվարի 24-ի ՀՕ-82-Ն հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքում	**Ընդունվել է:**

		983[1]-09.12.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագիծ	Ն հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-983[1]-09.12.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագիծը հանել շրջանառությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ նախագծով առաջարկվող կարգավորումը հնարավոր է սահմանել միայն Հարկային օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու ճանապար-հով: Այդ կապակցությամբ, առաջարկում ենք վերանայել նաև «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերնագիրը և շրջանառությունից հանվող օրենքի նախագծով սահմանված կարգավորումը նախատեսել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-983-09.12.2024-ՏՀ-011/1) ՀՀ օրենքի նախագծում՝ հետևյալ խմբագրությամբ նոր 4-րդ հոդված լրացնելու միջոցով. «Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել 2020 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության	փոփոխություն կատարելու մասին» (Պ-983[1]-09.12.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագիծը հանվել է շրջանառությունից և դրանով սահմանված կարգավորումը նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Պ-983-09.12.2024-ՏՀ-011/1) օրենքի նախագծում նոր 4-րդ հոդված լրացնելու միջոցով:	

			հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-82-Ն օրենքի 6-րդ հոդվածը:»:		
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	2. Ներդրողների համար լրացուցիչ կանխատեսելի հարկային միջավայր ձևավորելու նպատակով՝ առաջարկվում է խնդրո առարկա արտոնությունների գործողության ժամկետը, առաջին ընթերցմամբ ընդունված նախագծով առաջարկվող ժամկետների փոխարեն, երկարաձգել ևս մեկ տարով՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Միևնույն ժամանակ, առաջարկում ենք պարտատոմսերի մասով նախատեսել որոշակի բացառություն և սահմանել, որ մինչև Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հունվարի 24-ի «Հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-82-Ն օրենքով սահմանված վերջնաժամկետը թողարկված պարտատոմսերի մասով խնդրո առարկա արտոնությունները կիրառվում են մինչև այդ պարտատոմսերի մարումը: Վերոգրյալով պայմանավորված՝ առաջարկվում է լրամշակել նախագծի 1-ին հոդվածը և 2-րդ հոդվածի 1-ին մասը: Միևնույն ժամանակ, առաջարկում ենք առաջին ընթերցմամբ ընդունված նախագծից հանել նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը՝ հաշվի	**Ընդունվել է:** Նախագծի 1-ին հոդվածում և 2-րդ հոդվածի 1-ին մասում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:	**Ընդունվել է:**

			առնելով այն հանգամանքը, որ գոր-ծող Հարկային օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից և նման այլ գործարքներից ստացվող եկամուտներն արդեն իսկ ազատված են եկամտային հարկով հարկումից, և առաջարկվող կարգավորման անհրաժեշտությունը բացակայում է:		
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) 2-րդ մասի 4-րդ կետում «ֆոնդային բորսայում ցուցակված» բառերը փոխարինել «ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակված (առևտրին թույլատրված)» բառերով:»:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Ընդունվել է:**
4.	ՀՀ կառավարություն	Նոր հոդված	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածից հետո լրացնել նոր 3-րդ հոդված՝ հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 3. Օրենսգրքի 363-րդ հոդվածի 5-րդ մասում «դ-ժե» բառերը փոխարինել «դ-իա» բառերով:»:	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան լրացում՝ նոր 3-րդ հոդված լրացնելու միջոցով:	**Ընդունվել է:**
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Առաջարկվում է վերանայել նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանող հոդվածի համարակալումը, ինչպես նաև սահմանել, որ նախագիծն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և կիրառվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն (5-րդ հոդված):	**Ընդունվել է:**

			ծագած (ծագող) հարաբերությունների նկատմամբ:		